9700

1909

334·5
F-27

БИБЛІОТЕКА
Главнаго Управленія
по дѣламъ печати.
№ 4 5

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԲԱՆԴՈՐ

ԳՅՈՒՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

УСТАВЪ

Кооперативъ БАНВОР

68

334.5
Բ-27

БАКУ
Тип. А. Н. Тараева
П. Д. Мирзаянцъ
1909

3001

3345
Բ-27

C apm-n
5994

ԲԱՆՈՒՈՐ

ՍՊԱՌՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան նպատակը, իրաւունքներն ու պարտականութիւնները:

§ 1. Բանուոր սպառող ընկերութիւնը, հիմնուելով Բազի քաղաքապետութեան շրջանում, նպատակ ունի նախ առօրեայ պիտոյքներ ու մթերք հայթայթել իւր անդամներին, էժան կամ շուկայիչափաւոր գներով և երկրորդ՝ հնարաւորութիւն տալ նրանց, որ ընկերութեան գործառութիւնից գոյացած օգտից իրանց համար խնայողութիւն անեն:

Նկատ. Ընկերութիւնը, պատշաճաւոր թոյլտուութեամբ ու գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն, կարող է կազմակերպել այնպիսի հիմնարկութիւններ, որոնց նպատակը պիտի լինի, զանազան միջոցներով բարձրացնել իւր անդամների նիւթական ու բարոյական վիճակը:

§ 2. Առաջին յօդուածում որոշած նպատակի համաձայն, Ընկերութիւնն իրաւունք ունի՝

ա) կառուցել սեպհական պահեստներ ու

գործարաններ, զանազան առօրեայ պիտոյքներ պատրաստելու և պահելու համար, կամ թէ չէ կապալով վերցնել այդ շինութիւնները.

բ) պայմանագրեր ու պարտաւորութիւններ կապել կողմնակի անձանց ու հիմնարկութիւնների հետ, որպէս զի սրանք զանազան պիտոյքներ ու մթերք հայթայթեն ընկերութեանը, և նմանապէս մուրհակներ տալ ընկերութեան շրջանառութիւնների համար միջոցներ ձեռք բերելու։

գ) Ընկերութեան համար անհրաժեշտ սեփհական անշարժ կայքեր ձեռք բերել, ընդհանուր հիմունքների վրայ և

դ) Պատշաճաւոր թոյլատրութեամբ, այնպիսի ձեռնարկութիւնների մէջ մտնել, որոնք համապատասխանում են ընկերութեան նպատակներին։

§ 3. Ընկերութեան անդամներին, ապրանքներն ու մթերքները ծախւում են կանխիկ փողով կամ թէ չէ ապառիկ, որով օգտւելու պայմանները որոշում է ընդհանուր ժողովը։

Նկատ. Այս յօդւածում յիշւած ապրանքները, կարելի է ծախել և կողմնակի մարդկանց, բայց միայն կանխիկ փողով և այն էլ ընդհանուր ժողովի որոշած պայմաններով։

50557-ակ

§ 4. Ընկերութիւնը, նրա հաստատութիւնները, գրասենեակներն ու գործակալները, դասական տուրքի, մաքսերի և առևտրական իրաւանց հարկերի, դրոշմաթղթի և այլ ընդհանուր ու տեղական հասոյթների վերաբերեալ, ենթարկւում են թէ ընդհանուր և թէ ընկերութեան ձեռնարկութեանց մասին, այն բոլոր կանոնների ու որոշումներին, որոնք գոյութիւն ունին այժմ կայսրութեան մէջ և որոնք ապագայում կը հրատարակւեն դրանց վերաբերեալ։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արա ССР
36027-66

§ 5. Ընկերութիւնն ունի իւր անունով փոքագրւած կնիք։

Ընկերութեան միջոցները։

§ 6. Ընկերութեան միջոցները կազմում են՝ շրջանառու և պահեստի դրամագլուխները։

§ 7. Շրջանառու դրամագլուխը գոյանում է՝

ա) իրաւադրամներից (§ 13)

բ) անդամների բաժիններից (§ 13),-և

գ) այն փոխառութիւններից որն անում է վարչութիւնը, Ընդհանուր Ժողովի որոշած չափով։

Նկատ. Ընկերութեան պարտքերի գումարը, իրաւադրամների և բաժնեկազմ դրամագլուխների գումարից չպէտք է աւելանայ։

§ 8. Շրջանառու դրամագլուխը ծառայում է՝ Ընկերութեան առևտրական գործառութիւնների և ընթացիկ ծախքերի համար.

§ 9. Պահեստի դրամագլուխը գոյանում է՝

ա) Ընկերութեան տարեկան շրջանառութիւնից գոյացած օգտի մի մասից (§ 55),

բ) Ընկերութեան կանոնադրութեան ու հաշուետուերերի վաճառումից եկած գումարից (§ 15)

գ) օգուտը բաժանելու ժամանակ առաջ եկած կոպէկների կոտորակներից, որոնք ետ են գցուում (նկատ. § 55)

դ) պահեստի դրամագլխի տոկոսներից (§-11) և

ե) պատահական մուտքերից։

§ 10. Պահեստի դրամագլուխը բացառապէս յատկացուում է. այն վնասները ծածկելու համար որոնք կարող են առաջ գալ ընկերութեան գործառութեան ժամանակ, չնախատեսած հանգամանքներից։

§ 11. Պահեստի դրամագլուխը, Ընդհանուր Ժողովի որոշմամբ, դարձրուում է պետական կամ թէ չէ, կառավարութիւնից ապահովեցրած տոկոսաբեր թղթերի և պահուում է խնայողական դրամարկղներում, պետական բանկում, նրա գրասենեակներում ու բաժանմունքներում կամ թէ չէ, պատշաճաւոր թոյլտուութեամբ, արքունի գանձարանում։ Պահեստի դրամագլուխը որոշած նպատակին գործադրել (§ 10) կարելի է միմիայն Ընդհանուր Ժողովի որոշմամբ։

Ընկերութեան կազմը եւ նրա անդամների իրաւունքներն ու պարտականութիւնները։

§ 12. Ընկերութեան անդամ կարող են լինել բոլորը, առանց սեռի խտրութեան, բանուորներ ու արհեստաւորներ, նմանապէս և ամեն տեսակ ընկերութիւններ, հիւանդանոցներ ու դպրոցներ՝ — որոնք ցանկութիւն կայայտնեն այս կանոնադրութեանը հպատակելու։

Նկատ. 1 Անդամների թիւը անսահմանափակ է։

Նկատ. 2. Ընկերութեան կազմի մէջ չեն ընդունուում՝

ա) դպրոցի սանները

բ) ծառայութեան մէջ գտնուող ստորին զինուորականները և

գ) դատարանով, իրաւունքներից զրկուած անձինք։

§ 13. Ընկերութեան անդամ դրուողը տալիս է՝

ա) երեսունը հինգ կոպէկ միանուագ իրաւադրամ ու

բ) տասը ռուբլի.-բաժին։

Նկատ. բաժինը բարելի է միանգամից վճարել, կամ թէ չէ մաս-մաս, Ընդհանուր Ժողովի որոշած յապաղումներով։

§ 14. Թէ իրաքանչիւր անդամ քանի բա-

ժին կարող է ունենալ, այդ որոշում է Ընդհանուր Ժողովը։

§ 15. Ընկերութեան մէջ ընտրուող իւրաքանչիւր նոր անդամը, գրաւելիս, ստանում է մի մի օրինակ այս կանոնադրութիւնից ու հաշուետեար, վճարելով Ընդհանուր Ժողովի հաստատած արժէքը։ Հաշուետեարի մէջ գրւում են անդամի տուած տուրքերը, նրան բաց թողած ապրանքի արժէքը, իրան հասանելիք բաժինների վրայ հաշուած շահամասերն ու գնած ապրանքի համար ստանալիք նէրը, նմանապէս և դրամարկղից ստացած գումարները։

Նկատ. Ընկերութիւնը պահում է առանձին գրքեր, անդամների անձնական հաշիւներով, որպէսզի դրանց միջոցով կարելի լինի որոշել, թէ իւրաքանչիւր անդամ, տարեան ընթացքում ինչ գումարի ապրանք է գնել Ընկերութեան խանութից։

§ 16 Իւրաքանչիւր անդամ, Ընկերութեան Ընդհանուր Ժողովներում, միմիայն մի ձայնի իրաւունք ունի, անկախ իւր բաժինների թուից և այդ իրաւունքը նա ոչ ոքի չի կարող տալ։

Նկատ. 1. Ընկերութեան անչափահաս անդամները ձայնի իրաւունք չունին և չեն էլ կարող որևէ պաշտօնով ընտրուել, ընկերութեան գործերի կառավարչութեան վերաբերեալ։

Նկատ. 2. Այն անդամները, որոնք անմիջապէս շահագրգռուած են Ընկերութեան գործերին վերաբերեալ որևէ հարցում (օր. մթերք հայթայթելու, բնակարանի վարձման և առևտրական այլ համաձայնութիւնների) չեն մասնակցում նրանց վճռման ժամանակ։

§ 17. Բաժնետէրերը, Վարչութեան գիտութեամբ կարող են իրանց բաժինները փոխադրել ընկերութեան այլ անդամների կամ թէ կողմնակի անձանց վրայ, որոնք գրկուած չեն անդամ լինելու իրաւունքից։ Այն դէպքում երբ բաժինը փոխադրւում է կողմնակի մարդու վրայ, այն ժամանակ վերջինս պարտաւոր է նոր իրաւադրամ մտցնելու։

Նկատ. Ընկերութեան թէ կամաւոր հեռացող և թէ արտաքսուող անդամները, յետ չեն ստանում իրանց իրաւադրամները։

§ 18. Վնասների դէպքում, իւրաքանչիւր անդամ, պատասխանատու է միմիայն իւր՝,— ընկերութեան դրամարկղում ունեցած, բաժնեկազմ դրամագլխով, դրանից դուրս՝ նա ոչ անձնական պատասխանատուութեան է ենթարկւում, ոչ էլ ընկերութեան գործերի վերաբերեալ որ և է լրացուցիչ պարտաւորական վճարումների։

§ 19. Այն անդամը, որը չի վճարում ընկերութեան դրամարկղին, իւր տալիքները (§ 3 և 13), կարող է, վարչութեան առաջարկութեամբ,

ընդհանուր ժողովի միջոցով, արտաքսել ընկերութիւնից։

§ 20. Ընկերութեան անդամութիւնից արտաքսելու առիթ կարող է լինել, բացի վճարումների դանցառութիւններից, նմանապէս և կանոնադրութեան կոպիտ խախտումը, կամ թէ չէ ընկերութեան շահերին վնասելը։

§ 21. Անդամների արտաքսումը կարող է կայանալ միմիայն ընդհանուր ժողովին ներկայ անդամների ձայների $^2/_3$-ի վճռով (§ 31) և բացի դրանից, ժողովը արտաքսողի ցանկութեամբ պարտաւոր է նախապէս լսել, նրա բոլոր արդարացնող բացատրութիւնները։

§ 22. Թէ արտաքսած և թէ կամաւոր հեռացող անդամները, նմանապէս ընկերութեան դրամարկղում մի քանի բաժին ունեցողները, գրաւոր յայտարարութիւն տալով Վարչութեանը, կարող են յետ ստանալ Վարչութիւնից, իրանց բաժինները շահամասերով ու գնած ապրանքի համար հաշուած նէրի հետ, նոյնպէս և իրանց կիսատ բաժինները, միմիայն այն ժամանակ, երբ ընդհանուր ժողովի կողմից կհաստատուի ընթացիկ տարեայ հաշուետուութիւնը և երբ դրանք կվերջացնեն իրանց բոլոր հաշիւներն Ընկերութեան հետ և կը վճարէն այն վնասները, որոնք կարող են ընկնել այդ հանող և հեռացող բաժինների վրան։ Վճարման ժամանակամիջոցը նշանակում է Ընդհանուր ժողովը, սակայն այդ ժամանակամիջոցը, հաշուետուութեան հաստատման օրից, աւելի քան երեք ամիս չպէտք է տևի։

§ 23. Թէ կամաւոր հեռացող և թէ իրանց ապառիկները ուշացնելու համար արտաքսած անդամները, կարող են նորից ընդունուել ընկերութեան մէջ սակայն 13-դ յօդուածի համաձայն, պէտք է կանխապէս վճարեն, պարտադիր բաժինն ու իրաւադրամը։ Իսկ այլ պատճառով արտաքսածները ոչ մի դէպքում չեն ընդունուում նորից ընկերութեան մէջ։

Նկատ. Անկանոն վճարումների համար արտաքսած անդամները, նորից ընդունուելու ժամանակ, բացի վերոյիշեալից, պարտաւոր են վճարելու իրանց վրայ մնացած պարտքերը։

§ 24. Անդամի մահուան դէպքում, նրան պատկանող բաժինները, շահամասերն ու գնած ապրանքի համար տալիքները տրւում են նրա ժառանգներին՝ նոյն հիմունքների վրայ, ինչպէս կամաւոր հեռացող անդամներին (§ 22).

Ընկերութեան գործերի կառավարչութիւնը

§ 25. Ընկերութեան գործերը վարում են՝ ա) անդամների Ընդհանուր Ժողովը,—ու բ) Վարչութիւնը.

Ընդհանուր Ժողով

§ 26. Ընդհանուր Ժողովն իրաւունք ունի եթէ անհրաժեշտ է գտնում, վարչութեան կից ընտրել Խորհուրդ, որի գործունէութեան եղանակը որոշւում է Ընդհանուր Ժողովի հաստատած հրահանգներով։

§ 27. Ընդհանուր ժողովները լինում են հերթական և արտակարգ։ Վարչութիւնը հերթական ժողովներ հրաւիրում է ամեն տարի, ապրիլ ամսից ոչ ուշ։ Այս ժողովը քննում և հաստատում է անցած տարւան հաշիւն ու հաշուեկշիռը, ներկայ տարւան նախահաշիւն ու գործունէութեան ծրագիրը, նմանապէս և ընտրում է Վարչութեան ու վերաքննիչ Յանձնաժողովի անդամներ (§ 53)։ Այս ժողովներում են քննում ու վճռում այն բոլոր հարցերը, որոնք Վարչութեան իրաւասութիւնից վեր են և այն հարցերը, որոնք առաջարկւած են Վարչութեան կողմից։

Նկատ. Ընկերութեան անդամներից ոչ ոք իրաւունք չունի առանց յարգելի պատճառների, հրաժարւել, Ընդհանուր Ժողովի կողմից, իւր վրայ դրած պարտականութիւնների կատարումից։

§ 28. Արտակարգ Ընդհանուր ժողովները հրաւիրւում են Վարչութեան հայեցողութեամբ, վերաքննիչ յանձնաժողովի կամ թէ չէ ընկերութեան բոլոր անդամների մի տասներորդի պահանջով։ Ընկերութեան անդամների կամ վերաքննիչ յանձնաժողովի կողմից, արտակարգ ժողով հրաւիրելու այս պահանջը, Վարչութիւնն իրագործում է, իրան տւած յայտարարութեան օրից ոչ ուշ քան երկու շաբթում։

§ 29. Ընդհանուր Ժողովն, այս կանոնադրութեան համաձայն, վճռում է ընկերութեան գործերի վերաբերեալ բոլոր հարցերը. բայց նրա ատմիջական իրաւասութեանն են ենթարկւում հետևեալ տնօրինութիւնները՝. Որոշել Ընկերութեան գործառութեան չափն ու առարկաները, ընկերութեան համար անշարժ կայքեր— ձեռք բերելն ու սեփական կայքերի վաճառումը, կապալով տալն ու գրաւ դնելը նմանապէս և ձեռնարկութեան ընդարձակումը։ Ձեռնարկութեան ընդարձակման կամ թէ անշարժ կայք ձեռք բերելու դէպքում, Ընդհանուր Ժողովը պէտք է որոշի դրանց վրայ արւած ծախքերի ծածկելու միջոցը։ Ընդհանուր Ժողովը պէտք է վճռի նմանապէս և այն բոլոր հարցերը, որոնք առաջարկւում են՝ Վարչութեան, վերաքննիչ յանձնաժողովի, ընկերութեան առանձին անդամների, քաղաքապետի և ներքին գործոց նախարարի կողմից։

§ 30. Վարչութիւնը, ընկերութեան իւրաքանչիւր ժողովի տեղի, ժամանակի, նոյնպէս և քննութեան առնւելիք հարցերի մասին, նախօրօք յայտնում է անդամներին։ Վարչու-

թիւնն այդ մասին նմանապէս տեղեկացնում է ոստիկանութեան գլխաւորին և ընկերութեան հաստատութիւններում յայտարարութիւններ է կախում։

Նկատ. Ընդհանուր ժողովներում կարող են քննել միմիայն այն հարցերը որոնք նշանակւած են ժողովի հրաւիրագրերում, որոնք անմիջական առընչութիւն ունեն ընկերութեան կանոնադրութեամբ որոշւած գործունէութեան հետ և որոնց մասին զեկուցւած է տեղական ոստիկանութեան գլխաւորին։

§ 31. Ընդհանուր ժողովները կայացած են համարւում այն դէպքում, երբ ժողովին ներկայ է վարչութեան պաշտօնավայրում ապրող անդամների մի հինգերորդ մասը։ Իսկ եթէ հարկաւոր է վճռել՝ որևէ անդամի ընկերութիւնից հեռացնելու, ձեռնարկութեանց լայնացման, շրջանառու դրամագլխի մեծացման կամ քչացման, կանոնադրութեան լրացման կամ փոփոխութեան ու ընկերութեան կազմալուծման հարցերը, այն ժամանակ անհրաժեշտ է ընկերութեան բոլոր անդամների երկու-հինգերորդ մասի ներկայութիւնը։ Ընդհանուր ժողովներում հարցերը վճռւում են ժողովականների ձայների մեծամասնութեամբ, բացի այս յօդւածում յիշւած հարցերից, որոնց որոշման համար, անհրաժեշտ է ժողովականների ձայների երկու երրորդ մասը։ Երբ հարցերը վճռւում են ձայների հաստատակ առաւելութեամբ և հաւասար ձայներ են ստացւում, այն ժամանակ ընդունւում է այն կարծիքը, որի հետ համաձայն է նախագահը։

Նկատ. 1. Ընդհանուր ժողովներում բոլոր ընտրութիւնները (§ 36 և 53) նմանապէս և է որևէ անդամի արտաքսումը 21-դ յօդւածի հիման վրայ, կատարւում են գաղտնի քւերկութեամբ։ Մնացած դէպքերում ձայնաւութեան եղանակը որոշում է Ընդհանուր Ժողովը։

Նկատ. 2. Երբ Ընդհանուր Ժողովը, այս յօդւածում պահանջւած պայմանների հետևողութեամբ, հաստատի, այս կանոնադրութեան փոփոխութեան կամ լրացման մասին արւած առաջարկութիւնները, այն ժամանակ այդ առաջարկութիւնները ներկայացրւում են կառավարութեանը ի հաստատութիւն, որոշւած կարգով, այն պատճառների ու նկատառութիւնների բացատրութեամբ որոնք դրդել են այդպիսի փոփոխութիւններ մտցնել կանոնադրութեան մէջ։

§ 32. Եթէ անդամների օրինական թւի բացակայութեան պատճառով առաջին ժողովը չը

կայացաւ, այն ժամանակ ամենաշուտը մի շաբթից յետոյ երկրորդ անգամն է Ընդհանուր ժողով հրաւիրուում։ Այս երկրորդ ժողովն, անկախ ժողովին եկած անդամների թուից, համարւում է օրինաւոր կայացած և նրա որոշումները վերջնական, սակայն այդ մասին վարչութիւնը պարտաւոր է հրաւիրագրերում նախօրօք ըզգուշացնել անդամներին։ Այս երկրորդ ժողովում պէտք է քննուեն միմիայն այն հարցերը, որոնք նշանակուած են եղել առաջին ժողովի համար, բայց սնվճիռ են մնացել։ Միայն, այս դէպքում, նախընթաց յօդուածում առանձին յիշատակուած հարցերը վճռուում են ներկայ ժողովականների ձայների երկու երրորդ մասի առաւելութեամբ, իսկ մնացեալ հարցերը, ձայների հասարակ մեծամասնութեամբ։ Ընդհանուր ժողովի որոշումները պարտադիր են բոլոր թէ ներկայ և թէ բացակայ անդամների համար։

§ 33. Այն հարցերը որոնք Ընդհանուր ժողովի քննութեան առարկայ պիտի լինին, ստացւում են անպայման վարչութեան միջոցով, ուստի Ընդհանուր ժողովին որևէ առաջարկութիւն անել ցանկացող անդամները, պարտաւոր են գրաւոր կերպով այդ մասին դիմել վարչութեանը, Ընդհանուր ժողովից եօթ օր առաջ։ Եթէ առաջարկութիւնն արուած լինի ընկերութեան բոլոր անդամների մի տասներորդ մասի կողմից,

այն ժամանակ Վարչութիւնը պարտաւոր է այդ առաջարկութիւնը ներկայացնել կայանալիք Ընդհանուր ժողովին իրա նկատողութիւնների հետ միասին։

§ 34. Ընդհանուր ժողովում, գործերը կանոնաւոր վարելու համար, անդամներն ընտրում են իրենց միջից նախագահ, իսկ արձանագրութիւններ կազմելու համար՝ քարտուղար։ Մինչև նախագահ ընտրելը, Ընդհանուր ժողովում նրան տեղակալում է վարչութեան նախագահը։

§ 35. Ընդհանուր ժողովի որոշումները հաստատւում են արձանագրութիւններով, որոնք կարդացւում են նիստի վերջում բարձրաձայն և ապա ստորագրւում են ժողովի նախագահի, քարտուղարի, վարչութեան՝ ժողովին ներկայ եղող անդամների և առ սակաւը ընկերութեան ժողովին ներկայ եղող անդամների երեքի կողմից։

Ընկերութեան վարչութիւնը, նրա իրաւունքները ու պարտականութիւնները

§ 36. Ընկերութեան գործերի անմիջական վարիչն է Վարչութիւնը որը գտնւում է Բիբի-Հէյբաթում և բաղկացած է հինգ անդամներից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը իրա միջից երեք տարի ժամանակով։

Նկատ. 1. Վարչութեան անդամ կարող են ընտրուել այն անձինք, որոնք առնուազն մի լրիւ բաժին ունին։

Նկատ. 2. Վարչութեան անդամների թիւը, որոշում է Ընդհանուր ժողովը, ի նկատի ունենալով ընկերութեան առևտրական — արդիւնաբերական գործառութեան չափը (այնպէս որ իւրաքանչիւր բաժանմունքի գործավարման համար կարելի է ընտրել առանձին վարչութեան անդամ)։

Նկատ. 3. Այն անդամները- որոնք ապրանք են հայթայթում ընկերութեանը կամ նոյնատեսակ առևտրով են պարապում, նմանապէս նրանք, — որոնք ընկերութեան մէջ գործակատարի պաշտօն ունին, վարչութեան անդամ չեն կարող ընտրուել։

§ 37. Վարչութեան որևէ անդամի երկարաև բացակայութեան ու հիւանդութեան, նոյնպէս նրանցից որևէ մէկի մահուան դէպքում նրան փոխարինելու համար, Ընդհանուր ժողովն ընտրում է (նոյն հիմքերի վրան ինչպէս և վարչութեան անդամներին), համապատասխան թւով անձնափոխանորդներ, որոնք վարչութեան անդամի պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում, օգտւում են այս պաշտօնին յատկացրած բոլոր իրաւունքներովն ու արտօնութիւններովը։

§ 38. Երբ, վարչութեան անդամների և նրանց անձնափոխանորդների սկզբնական ընտրութիւնից յետոյ լրանում է մի տարին, այն ժամանակ,

վարչութեան անդամների ու նրանց անձնափոխանորդների, ժողովով որոշած մի յայտնի թիւը ամեն տարի հեռանում է՝ նախ վիճակով և ապա պաշտօնի մտնելու աւագութեան կարգով, իսկ հեռացողների տեղը ընտրւում են նոր, վարչութեան անդամներ ու անձնափոխանորդներ։

Նկատ. Վարչութիւնից հեռացող անդամներն ու նրանց անձնափոխանորդները կարող են նորից ընտրուել, եթէ այդ մասին յայտնեն իրանից համաձայնութիւնը։

§ 39. Վարչութեան հեռացած անդամի տեղ պաշտօնավարող անձնափոխանորդը, վարչութեան կազմի մէջ մնում է, մինչև այն ժամանակամիջոցի վերջը որով ընտրւած է եղել հեռացած անդամը, բայց ոչ աւելի այն ժամանակամիջոցից որով ընտրւած է ինքը անձնափոխանորդը։

§ 40 Վարչութեան անդամներն ամեն տարի, տարեկան Ընդհանուր ժողովից յետոյ ընտրում են իրանց միջից նախագահ, նրա փոխանորդը, գանձապահ ու քարտուղար։

Նկատ. Քարտուղարի և գանձապահի պաշտօնը կարող է վարել միևնոյն անձնաւորութիւնը։

§ 41. Վարչութեան անդամները, ընկերութեան գործերը վարելու աշխատանքի համար,

360927-66
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ZUUՈ-Арм.ССР

կարող են սահանայ, Ընդհանուր Ժողովի որոշմամբ, մի յայանի ռոճիկ կամ թէ չէ, ընկերութեան օգուտներից տոկոսային վարձատրութիւն։

§ 42. Վարչութիւնը անօրէն է ընկերութեան բոլոր գործերի ու դրամագլուխների։ Նրա պարտականութիւններն են նմանապէս՝

ա). տալ, ընդունել և պահել տոկոսաբեր թղթերը, Ընդհանուր Ժողովի սահմանած կարգով.

բ). Պահել գործառութեան հաշուապահութիւնը, վարել հաշիւները, կազմել 51—53 յօդուածների հիման վրայ, տարեկան հաշիւը հաշուեկշիռը, նախահաշիւն ու գործունէութեան ելանակը։

գ). Վարձել և արձակել ընկերութեան համար անհրաժեշտ ծառայողներ, նշանակել նրանց ռոճիկներն ու պարապմունքը.

դ). Գնել, ծախել, պահել զանազան մթերք ու ապրանքներ և հսկել դրանց լաւորակութեան վրայ.

ե). Որոշել հոգայուելիք ապրանքի որակն ու նրանց ձեռք բերելու ձևը (ապառիկ թէ կանխիկ փողով)։

զ) Կազմակերպել ընկերութեան ձեռնարկութիւններն ու կառավարել դրանք.

է). Միջոցներ ձեռք առնել, լաւ մթերքներ ու ապրանք պահելու և էժան գնով ծախելու.

ը). Վարձել՝ մթերանոցներ, սենեակներ և ընկերութեան առևտրի համար, այլ անհրաժեշտ բնակարաններ.

թ). ապահովագրել ընկերութեան կայքերը.

ժ). Տալ և ընդունել ժամանակը լրացած մուրհակներ և այլ ժամորոշ պարտաւորութիւնները, առանց դուրս գալու Ընդհանուր Ժողովի հաստատած սահմաններից.

ի). պայմանագրեր կապել և համաձայնութիւններ կայացնել, ընկերութեանը ապրանքներ հայթայթելու համար.

լ). Հաւատարմագրեր տալ այն անձանց, որոնց ընդունել է Վարչութիւնը ընկերութեան ծառայութեան մէջ, մինչև անգամ և նրանց, որոնց Ընդհանուր Ժողովը է պաշտօնի նշանակել.

խ). Վաւերացնել տալ անշարժ սեփականութեան գնման կամ վաճառման օրինական գործողութիւնները.

ծ). Ընդունել ընկերութեան նորամուտ անդամներին.

կ). Ընդհանուր Ժողովի հրաւիրել ընկերութեան անդամներին և առհասարակ տնօրինել ու վարել ընկերութեան վերաբերեալ բոլոր գործերը, առանց դուրս գալու Ընդհանուր Ժողովի ուրուագծած սահմաններից։

Վարչութեան գործելակերպը, նրա իրաւունքների սահմանն ու պարտականութիւնները որոշւում են առանձին հրահանգներով, որը հաստատւում ու փոփոխւում է միմիայն Ընդհանուր ժողովի կողմից։

§ 43. Վարչութիւնը, ծախքերը կատարում է, իւրաքանչիւր տարի Ընդհանուր ժողովի կողմից հաստատւած նախահաշւի համաձայն։ Ժողովը պէտք է որոշի, թէ վարչութիւնը, նախահաշւից դուրս, ինչքան գումար կարող է մսխել, անյետաձգելի պարագաներում։ Վարչութիւնը, այդ տեսակ ամեն մի ծախքի մասին, պէտք է մօտակայ Ընդհանուր ժողովի հաւանութիւնը հարցնի։

§ 44. Վարչութիւնն առանձնապէս աշխատում է, որ ընկերութեան շրջանառու դրամագլուխը առանց գործառութեան չը մնայ։ Այդ նպատակով, Վարչութեան անդամները հեռանալով արտաքին, նկատողութիւններ են կազմում, ընկերութեան պահեստներում չեղող ապրանքների պահանջի մասին, և ապա փողերն անմիջապէս գործադրւում են այդ չեղող ապրանքները ձեռք բերելու համար։ Իսկ եթէ հանգամանքներին նայած, նկատւում է որ ապրանք առնելը տարաձգեպ է և ոչ ձեռնտու, այն ժամանակ ապա փողերը դարձրւում են տոկոսաբեր թղթեր, կամ թէ Ընդհանուր ժողովի հաւանութեամբ, տեղաւորւում են ընթացիկ հաշւով, տեղական վարկատու հիմնարկութիւններից որևէ մէկում։

§ 45. Ընկերութեան հաստատութիւններից ապրանքները պէտք է ծախւեն առանց հարցումների ու սակարգութեան, բոլորին միևնոյն գնով. դրան խստիւ հսկում է Վարչութիւնը։ Բոլոր ապրանքները սահմանած գնով ծախելու համար, Վարչութիւնը պատրաստում է սակագիր, որը վաւերացրւում է վարչութեան անդամների ստորագրութեամբ և կախւում է ընկերութեան հաստատութիւններում մի աչքի ընկնող տեղ։ Եթէ ապրանքների շատութեան ու բազմատեսակութեան պատճառով, սակագիր պատրաստելը անյարմար է, այն ժամանակ գները նշանակւում են ուղղակի ապրանքների վրան։

§ 46. Ընկերութեան գործերի վերաբերեալ գրագրութիւնները կատարւում են Վարչութեան անունից, նախագահի կամ թէ չէ Վարչութեան անդամներից որևէ մէկի ստորագրութեամբ։

§ 47. Սակայն՝ մուրհակները, հաւատարմագրերը, պայմանագրերը, գնման վաւերագրերն ու այլ փաստագրերը, նմանապէս վարկային հաստատութիւններից ընկերութեան գումարների յետ ստանալու պահանջները, անպայման պէտք է ստորագրւեն Վարչութեան անդամների առնւազն կէսի կողմից։ Փոստից՝

գումարներ, կապոցներ ու գանազան վկայագրեր ստանալու համար, բաւական է, որ Վարչութեան անդամներից մէկն ստորագրէ և Ընկերութեան կնիքով վաւերացնի։

§ 48. Վարչութիւնը ժողովւում է հարկ եղած դէպքում, բայց յամենայն դէպս, առնւազն ամիսը մէկ անգամ, անդամների փոխադարձ համաձայնութեամբ նշանակւած օրերին, որի մասին տեղեկացնում են Ընկերութեան անդամներին։ Վարչութեան նիստերին, Ընդհանուր ժողովի թոյլտւութեամբ, կարող են ներկայ լինել և Ընկերութեան անդամները, սակայն առանց վճռական ձայնի։ Վարչութեան որոշումների վաւերականութեան համար, անհրաժեշտ է Վարչութեան անդամների մեծամասնութեան ներկայութիւնը։

Վարչութիւնը կազմում է իւր նիստերի արձանագրութիւնները, որոնք ստորագրւում են բոլոր ներկայ եղող անդամների կողմից։

§ 49. Վարչութեան որոշումները կայանում են ձայների մեծամասնութեամբ, իսկ երբ ձայները հաւասար են, այն ժամանակ վիճելի հարցի վերջնական որոշումը թողնւում է Ընդհանուր ժողովի հայեցողութեանը։ Ընդհանուր ժողովին են ներկայացրւում և այն բոլոր հարցերը, որոնց վերաբերեալ, Վարչութիւնը կամ վերաքննիչ յանձնաժողովը անհրաժեշտ են համարում Ընկերութեան անդամների ընդհանուր մասնակցութեամբ գործելու, նմանապէս և այն հարցերը, որոնք կանոնագրութեան և Ընդհանուր ժողովի հաստատած հրահանգների հիման վրայ, Վարչութեան իրաւասութիւնից դուրս են։

Նկատ. Եթէ Վարչութեան որոշման հետ չհամաձայնւող անդամը, պահանջում է որ իւր անհամաձայնութիւնը արձանագրութեան մէջ մտցրւի, այն ժամանակ նրանից վերանում է կայացած որոշման վերաբերեալ պատասխանատուութիւնը։

§ 50. Վարչութեան անդամները կատարում են իրանց պարտականութիւնները հնդհանուր օրինաց ու այս կանոնագրութեան որոշումների հիման վրայ, իսկ՝ օրինազանց անօրինութիւնների, պաշտօնի սահմաններից ելնելու, անգործնէութեան, և թէ այս կանոնագրութեան ու թէ Ընդհանուր ժողովի որոշումները խախտելու դէպքում, նոքա ենթարկւում են պատասխանատուութեան, ընդհանուր օրինաց հիման վրայ։

Նկատ. Վարչութեան անդամները կարող են փոփոխւել, Ընդհանուրժողովի որոշմամբ, և նախ քան նրանց պաշտօնավարութեան ժամանակամիջոցի լրանալը։

Ընկերութեան գործերի հաշուեցուցիւնը, Օգուտի բաժանումն ու շահամասերի հատուցումը

§ 51. Ընկերութեան գործառութեան տա-

բին հաշուում է յունուարի մէկից մինչև յունուարի մէկը։ Վարչութիւնը իւրաքանչիւր անցած տարեան համար կազմում և ներկայացնում է Ընկերութեան անդամների տարեկան հերթական Ընդհանուր Ժողովին, Ընկերութեան գործառութեան, տարեկան մանրամասն հաշիւն ու շրջանառութեան հաշուեկշիռը, քննելու և հաստատելու համար։

Նկատ. Տարեկան Ընդհանուր Ժողովից երկու շաբաթ առաջ, Ընկերութեան անդամների համար բացուում են Վարչութեան հաշուապահական գրքերը իրանց բոլոր հաշիւներով, փաստաթղթերով, և հաշիւն ու հաշուեկշիռին վերաբերեալ բոլոր բացատրութիւններով՝ — ծանօթանալու համար։

§ 52. Հաշիւը պէտք է մանրամասնօրէն պարունակէ հետևեալ գլխաւոր յօդուածները՝

ա) Շրջանառու և պահեստի դրամագլուխների դրութիւնը.

բ) Հաշի ժամանակաշրջանի ընդհանուր եկ ու մուտքը.

գ) Ընկերութեան ծառայողների ռոճիկի և կառավարչութեան վերաբերեալ այլ ծախքերի հաշիւը.

դ) Ընկերութեան, գոյութիւն ունեցող կայքի և պաշարի հաշիւը.

ե) Ընկերութեան թէ վեր առած և թէ ուրիշներին տուած պարտքերի հաշիւը.

զ) Օգուտների և վնասների հաշիւը. և

ը) զուտ օգուտի հաշիւն ու նրա մօտաւոր բաժանումը։

§ 53. Հաշիւն ու հաշուեկշիռը ստուգելու համար, Ընդհանուր Ժողովը մի տարի առաջ, նշանակում է Ընկերութեան անդամներից երեք կամ աւելի հոգուց բաղկացած վերաքննիչ յանձնաժողով, որոնք ոչ Վարչութեան անդամ են, ոչ էլ Ընկերութեան գործերի կառավարչութեան վերաբերեալ որև է պաշտօն ունին։ Այս Յանձնաժողովը հաւաքւում է հետևեալ տարեկան Ընդհանուր Ժողովից ոչ ուշ քան մի ամիս առաջ և վերաքննելով անցած տարեան հաշիւն ու հաշուեկշիռը, բոլոր գրքերը, հաշիւները, փաստաթղթերն ու յաւելուածները, նմանապէս Վարչութեան ու Ընկերութեան բաժանմունքների գործավարութիւնը, և այդ բոլորի մասին կազմելով իւր եզրակացութիւնները, հաշի և հաշուեկշռի հետ միասին ներկայացնում է Ընդհանուր Ժողովին։ Յանձնաժողովի եզրակացութիւնների համեմատութեամբ, Ժողովը կայացնում է հաշի և հաշուեկշռի վերաբերեալ, իւր վերջնական վճիռը։ Յանձնաժողովը իրաւունք ունի եթէ հարկաւոր է համարում, կամ Ընդհանուր Ժողովը կարող է նրան յանձնարարել, որ նա այցելէ և քննէ Ընկերու-

թեան ողջ կայքը հենց տեղն ու տեղը, տուգի տարեան ընթացքում կատարված առևտրական գործողութիւնները, նմանապէս կայքը պահելու համար արված ծախքերը, և կատարէ առհասարակ բոլոր անհրաժեշտ հետախուզութիւնները, որպէսզի կարելի լինի եզրակացութիւն դուրս բերել, կատարված գործառութեաց, ծախքերի և առհասարակ ողջ շրջանառութեան՝ օգտակարութեան, պատեհութեան և նմանապէս դրանց ձեռնտուութեան աստիճանի մասին։ Վերոյիշեալն ի կատար ածելու համար, Վարչութիւնը պարտաւոր է ամեն տեսակ դիւրութիւններ տալ Յանձնաժողովին։ Յանձնաժողովի նախնական քննութեանն է ներկայացրուում և գալիք տարեան նախահաշիւն ու գործնէութեան եղանակը, որոնք Յանձնաժողովը իրանկատողութիւնների հետ միասին ներկայացնում է Ընդհանուր Ժողովին։ Սրանից անկախ, յանձնաժողովն իրաւունք ունի, իւր կողմից անհրաժեշտ համարված դէպքերում, պահանջել Վարչութիւնից, որ արտակարգ Ընդհանուր Ժողով հրաւիրի (§ 28)։

Նկատ. Ընկերութեան գործերի քննութիւն կարող է կատարել և քաղաքապետի կարգադրութեամբ, եթէ նա տեղեկութիւններ է ստանում Ընկերութեան մէջ տեղի ունեցող անկարգութիւնների կամ թէ կանոնադրութեան խախտման մասին։

§ 54. Տարեկան հաշիւն ու հաշուեկշիռը, Ընդհանուր Ժողովում հաստատելուց, յետոյ երեք-երեք օրինակ ուղարկուում է ներքին գործոց Մինիստրութեան տնտեսական դեպարտամենտին ու Բագուի քաղաքապետին և բացի դրանից Ժողովի կարգադրութեամբ, կարող է հրատարակուել պարբերական թերթերում։

§ 55. Երբ հաստատուում է հաշիւը, Ընդհանուր Ժողովում, այնուհետև տարեայ գուտ օգուտից, այսինքն այն գումարից, որը մնում է բոլոր ծախքերն ու վնասները ծածկելուց յետոյ եթէ մնաց այդպիսի մի գումար դրանից՝ 10% կցուում է պահեստի դրամագլխին, այդքան էլ բաժինների համար որպէս շահաբաս, սակայն այնպէս որ բաժնի իւրաքանչիւր բուրլուն 10%-ից աւել չընկնի։ Մնացեալ գումարից, Վարչութեանը տոկոսային վարձատրութիւն տալուց յետոյ, (եթէ միայն այդ որոշված է Ընդհանուր Ժողովի կողմից 41 յօդուածի համաձայն), մնացեալը բաժանուում է Ընկերութեան անդամների մէջ իւրաքանչիւրին համապատասխան, Ընկերութեան խանութից, նրա՝ գնած ապրանքի արժէքի։

Նկատ. 1 Ընդհանուր Ժողովն իրաւունք ունի արդիւնքի մի մասը, ծախսել Ընկերութեան անդամների համար օգտակար նպատակների։

Նկատ. 2. Երբ պահեստի տրամագլու-

խը հանում է բաժնեկազմ դրամագլխին, այնուհետև Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարելի է դադարեցնել, ընկերութեան օգուտներից։ տոկոսների յատկացնելը պահեստի դրամագլխին։ Եթէ պահեստի դրամագլուխը պակասում է, այն ժամանակ այդ պարտադիր կցումները վերսկսւում են։

Նկատ. 3. Շահամասերը հաշւում են միմիայն լրիւ բաժինների վրայ, այն էլ ամբողջ ամիսների համար։

Նկատ. 4. Անդամներին տրւելիք շահամասերի կոպէկների կոտորակները եւ են պահւում և աւելացրւում են պահեստի դրամագլխին։

§ 56. Շահամասերը բաժանւում են անդամներին, Վարչութեան հաշւի՝ Ընդհանուր Ժողովում հաստատելուց յետոյ, երեք ամսուան ընթացքում։

§ 57. Շահամասը, տիրոջ ցանկութեամբ, կարող է մնալ Ընկերութեան դրամարկղում, նոր բաժին կազմելու համար։ Նախնթաց յօդւածում յիշած շահամասերը, եթէ չեն ստացւում իրա ժամանակին, համարւում են նոր բաժիններ կազմելու համար մտած գումարներ։

Նկատ. Երբ անդամի բաժնեկազմ դրամագլխի գումարը, 14-դ յօդուածի համաձայն, հասնում է Ընդհանուր Ժողովով հաստատած չափին, այն ժամանակ, անդամի Ընկերութեան դրամարկղում թողած չափից աւել շահամասի համար տոկոս չի տրւում։

Ընկերութեան գործերի վերաբերեալ վէճերի քննութիւնը, պատասխանատուութիւն եւ նրա գործնէութեան դադարումը։

§ 58. Ընկերութեան գործերի վերաբերեալ վէճերը, որոնք տեղի են ունեցել՝ անդամների, նրանց և Վարչութեան անդամների միջև, նմանապէս այն վէճերը որոնք տեղի են ունեցել Վարչութեան անդամների միջև, նրանց և Ընկերութեան այլ ընտրեալների ու մասնաւոր անձանց մէջ, վճռւում են՝ կամ Ընդհանուր Ժողովում, եթէ վիճող կողմերը համաձայն են դրան կամ թէ չէ քննւում են ընդհանուր դատական կարգով։

§ 59. Ընկերութեան պատասխանատուութիւնը սահմանափակւում է նրան պատկանող անշարժ ու շարժական կայքով և դրամագլուխներով։

§ 60. Եթէ հաշիւները ստուգելուց յետոյ, որ և է չնախատեսւած հանգամանքների շնորհիւ վնաս երևան գայ, այն ժամանակ այդ վնասը ծածկւում է պահեստի դրամագլխից, իսկ

երբ դա բաւականութիւն չարաւ, շրջանառու դրամագլխի անդամների բաժիններից։ Պակասացնելով այդպիսով իւրաքանչիւր բաժնի չափը, այն անդամները որոնք ոչ մի լրիւ բաժին չեն ունենայ, պարտաւոր են ամբողջացնելու իրանց բաժինները, Ընդհանուր Ժողովի որոշած ժամանակամիջոցում։

§ 61. Ընկերութեան համար գոյութեան ժամանակամիջոց նշանակւած չէ։ Եթէ գործերի ընթացքին նայած, Ընկերութեան փակումը անհրաժեշտ համարւեց, այն ժամանակ նրա գործունէութիւնը դադարում է ընկերութեան Ընդհանուր Ժողովի որոշմամբ, նրա երկու, յաջորդական արտակարգ ժողովներում, եթէ նախ քան երկրորդ ժողովը, առաջին ժողովում պարզաբանւած, Ընկերութեան փակման առիթները վերացած չեն լինի։

Նկաս. Եթէ Ընկերութիւնը, հիմնադիրների բացման իրաւունքը ստանալու օրից, մի տարւան ընթացքում, չի սկսում իր գործունէութիւնը, այն ժամանակ նա չկայացած է համարւում։

§ 62. Ընկերութեան գործունէութեան դադարեցման դէպքում, Ընդհանուր Ժողովը, իրա միջից ընտրում է երեք հոգուց ոչ պակաս, կազմալուծող յանձնաժողովի անդամներ և որոշում է Ընկերութեան գործերի դադարեցման կարգը։ Կազմալուծող յանձնաժողովը, ծանուցագրերի և յայտարարութեանց միջոցով հրաւիրում է Ընկերութեան պարտատէրերին, միջոցներ է ձեռք առնում նրանց լիակատար բաւարարութիւն տալու համար, կանխիկ դրամի է փոխում Ընկերութեան կայքերը, պայմաններ ու համաձայնութիւններ է կայացնում երրորդ անձանց հետ, Ընդհանուր Ժողովի տւած ցուցմունքների հիման վրայ առանց դուրս գալու սահմաններից։ Այն գումարները որոնք յատկացրւած են պարտատէրերին գոհացնելու համար, և որոնք անհրաժեշտ են նմանապէս վիճելի պահանջների բաւարարութիւնը ապահովելու համար, կազմալուծող յանձնաժողովի ձեռքով, պարտատէրերի հաշին, մացրւում են պետական վարկատու հիմնարկութիւններից մէկն ու մէկը։ Մինչև այդ, չի կարելի ձեռնամուխ լինել, Ընկերութեան անդամներին գոհացնելու՝,—համապատասխան Ընկերութեան տրամադրութեան տակ մնացած միջոցների։ Կազմալուծող յանձնաժողովը հաշիներ է ներկայացնում Ընդհանուր Ժողովին, նրա որոշած ժամանակամիջոցներում, և դրանից անկախ, դադարումը աւարտելուց յետոյ, ներկայացնում է ընդհանուր հաշիւ։

§ 63. Երբ Ընդհանուր Ժողովը հաստատում է կազմալուծող յանձնաժողովի ներկայացրած ընդհանուր հաշիւը (§ 62), այն ժամանակ ընկերութեան անդամներին վերադարձրւում են իրանց բաժինները, շահամասերն ու նէրները, առաջուց հանելով նրանց վրայ ընկած փաստը, եթէ եղել է (§ 63)։ Իսկ ընկերութեան մնացած կայքը, եթէ մնաց, գործադրւում է հանրօգուտ նպատակների համար, Ընդհանուր Ժողովի որոշմամբ, որն ուժ է ստանում քաղաքապետի կողմից հաստատելուց յետոյ, իսկ քաղաքապետի

անհամաձայնութեան դէպքում, այդ հարցի վերջնական վճռումը, թողնուում է ներքին գործոց Մինիստրի հայեցողութեանը։

§ 64. Թէ գործերի դադարեցումը սկսելու և թէ վերջացնելու մասին, յայտնուող կառավարչութիւնների պարզաբանութեանց հետ միասին, առաջին դէպքում՝ Վարչութեան, իսկ վերջին դէպքում՝ կազմակերպող Յանձնաժողովի կողմից, զեկուցւում է ներքին Գործոց Մինիստրութեանը քաղաքապետի միջոցով։ Նմանապէս պատշաճաւոր յայտարարութիւններ են տրւում 'ի գիտութիւն Ընկերութեան անդամների և այն անձանց, որոնք առնչութիւն ունեն Ընկերութեան գործերի հետ։

§ 65. Եթէ, սնկախ քաղաքապետներին ու նահանգապետներին տւած իրաւունքից (ст. 321 և 863 т. II св. зак. изд. 1892 г. общ. губ. учр.) փակելու հասարակական ժողովները, երբ նրանց մէջ յայտնւում է՝ պետական կարգերի, հասարակական անդորրութեան ու բարոյականութեան հակառակ որևէ բան, քաղաքապետը անհրաժեշտ է համարում փակելու Ընկերութիւնը, այլ պատճառներից դրդւած, այդ դէպքում նա ներկայացնում է այդ մասին, ներքին գործոց Մինիստրութեան հայեցողութիւնը։

Նկատ. Երբ Ընկերութիւնը փակւում է քաղաքապետի կարգադրութեամբ, այդ դէպքում վերջինիցս է կախւած, նշանակել Ընդհանուր ժողովի ժամանակն ու կարգը, Ընկերութեան գործերի դադարեցման հարցը վճռելու համար, կամ թէ չէ անմիջապէս Ընկերութեան անդամներից յանձաժողով ընտրել, նրա գործերը դադարեցնելու։

На основан. Циркуляра Хозяйств. Департамента Министерства Внутренних Дѣлъ, отъ 13 мая 1897 г. за № 4190. Утвержд. 1 [illegible] 1898 г. Г. Товарищ. пол. Шубинскій,

ՀՍՍՌ-ԱԳԻ ՊՏԳ

Հտ 24
Գրմ 5
5994
2013
<< Ազգային գրադարան >>
NL0042679
9700